ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Մանուկյանի ք.Դուշանբե (Տաջիկստանի Հանրապետություն) կատարած պաշտոնական գործուղման մասին

1. Անունը, ազգանունը՝

Արթուր Մանուկյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

ք.Դուշանբե, 2018թ. օգոստոսի 23-25-ը

4. Հրավիրող կողմը՝

Տաջիկստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական հարկային կոմիտե

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն ԱՊՀ անդամ պետությունների Հարկային ծառայությունների ղեկավարների համակարգող խորհրդի (ՀԾՂՀԽ) 25-րդ նստաշրջանին

6. Քննարկված թեմաները՝

Համակարգող խորհրդի նստաշրջանի ընթացքում քննարկվել են, մասնավորապես հետևյալ հարցերը.

- ՀԾՂՀԽ կազմում փոփոխություններ կատարելու մասին,
- 2017-2018թթ. ՀԾՂՀԽ աշխատանքային ծրագրի կատարման արդյունքների մասին,
- «Մինչ 2020թ. ընկած ժամանակահատվածում ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության երրորդ փուլի (2016-2020թթ.) իրագործմանն ուղղված միջոցառումների ծրագրի» կատարման ընթացքի մասին,
- ՀԾՂՀԽ 25-րդ նիստին նախապատրաստման վերաբերյալ հարկային ծառայությունների փորձագետների նիստի արդյունքների մասին,
- Հարկային վարչարարությունը թվայնացված տնտեսության դարաշրջանում,
- «ԱՊՀ անդամ պետությունների հարկային մարմինների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման մասին» արձանագրության կնքման վերաբերյալ,

- ԱՊՀ անդամ պետությունների հարկերի և հարկման ոլորտում կադրերի պատրաստման և վերապատրաստման բազային կազմակերպությունների հաշվետվության մասին,

- ԱՊՀ ՀԾՂՀԽ միջազգային համագործակցության և հարկ վճարողների հետ աշխատանքների գծով աշխատանքային խմբի կանոնակարգը հաստատելու մասին,

- 2017-2018թթ. ՀԾՂՀԽ աշխատանքային ծրագրի, օրակարգի նախագծի, ՀԾՂՀԽ 26-րդ նիստի անցկացման ժամկետի և վայրի մասին,

- ՀԾՂՀԽ նախագահի ընտրության մասին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համակարգող խորհրդի նստաշրջանի ընթացքում Հայաստանի հարկային մարմնի պատվիրակությունն իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել նիստի օրակարգում ընդգրկված բոլոր հարցերի աշխատանքային քննարկումներին՝ ներկայացնելով քննարկվող հարցերի կարգավորման վերաբերյալ ՀՀ ՊԵԿ պրակտիկան:

Նստաշրջանի ընթացքում՝ «Տվյալների մեծ բազաների վերլուծությունը որպես հարկային վարչարարության արդյունավետ գործիք» խորագրով շնորհանդեսը ներկայացրեց ՀՀ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ Ա.Մուրադյանը:

Նիստի շրջանակներում կայացել են երկկողմանի հանդիպումներ ԱՊՀ անդամ պետությունների հարկային մարմինների ղեկավարների հետ, այդ թվում՝

- Բելառուսի հարկերի և գանձումների նախարարի տեղակալ Ի.Կլեպչայի,
- Ռուսաստանի դաշնային հարկային ծառայության ղեկավարի տեղակալ Ա.Օվերչուկի,
- Մոլդովայի գլխավոր պետական հարկային տեսչության տնօրենի տեղակալ Ի.Յուրկանուի,
- Տաջիկստանի հարկային կոմիտեի նախագահ Ն.Դավլաթզոդայի,
- Կորեայի Հանրապետության ազգային հարկային ծառայության կոմիսար Խ.Սընխիի հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Համակարգող խորհրդի նստաշրջանի արդյունքներով ստորագրվել է արձանագրություն (կցվում է):

Նստաշրջանի ընթացքում ՀԾՂՀԽ նախագահությունը ստանձնել է Ռուսաստանի Դաշնությունը և ՀԾՂՀԽ նոր նախագահ է ընտրվել ՌԴ դաշնային ծառայության ղեկավար Մ.Միշուստինը:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Նիստի մասնակցության արդյունքներով առաջարկվում է՝

- ընդգրկել ԱՊՀ անդամ պետությունների հարկային ծառայությունների ղեկավարների համակարգող խորհրդի 25-րդ նստաշրջանի արձանագրության կատարումը ՀՀ ՊԵԿ աշխատանքային ծրագրում,
- ավարտին հասցնել հարկային վարչարարության իրականացման համար ԱՊՀ անդամ պետությունների հարկային մարմինների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման մասին համաձայնագրի կնքմանը նախապատրաստելու աշխատանքները,
- ապահովել ԱՊՀ անդամ պետությունների Հարկային ծառայությունների ղեկավարների համակարգող խորհրդի 26-րդ նստաշրջանում ներկայացվող թեմայով («Էլեկտրոնային ծառայություններ հարկային վարչարարությունում և դրանց մատուցման թվային կապուղիները») ՀՀ ՊԵԿ կողմից շնորհանդեսի պատրաստումը և ներկայացումը ՀԾՂՀԽ հերթական նիստում:

9. Գործուղվողը՝

Արթուր Մանուկյան

10. Ստորագրություն, ամսաթիվ

27 օգոստոսի 2018թ.